

ՅՈՒՆԵՍՔՈ

# ԳԼԻԱՌՈՒ

Թարգմանիչներ՝  
Կարինե և Ալեքսանդր Աղաբեկյաններ



Գ Ի Տ Վ Ա Զ Բ

Երևան 2012



This translation has been published with the financial support of NORLA

## Jo Nesbø, Hodejegerne

Յո Նեսբօ

Գլխառուս – Վեպ, Եր.: Գիտանք, 2012, 240 էջ.

Ուշեր Բրաունը փայլուն «ուղեղի որսորդ» է՝ խոշոր ընկերությունների համար բարձրակարգ դեկավաներ հավաքագրելու մասնագետ:

Բայց և... բանկարժեք նկարների գող, ինչը շքեղ կյանք վարելու հնարավորություն է տալիս իրեն և իր կնոջը: Ի՞նչ չի անի 168սմ հասակ ունեցող տղամարդը՝ իր գեղեցկուիի կնոջը հաճոյանալու համար:

Դանդիպումը նախկին կոմանդոս Կլաս Գրևեի հետ, որը գլխավոր տնօրենի պաշտոնի գերազանց թեկնածու է և Ռուբենսի նկարի տեր, ճակատագրական է դառնում ուղեղի որսորդի համար:

Ուղեղի որսը վերածվում է իսկական գլխառուսի, որտեղ ուղեղի որսորդը կարող է կորցնել և կնոջը, և կյանքը:

Այս սարսափավեպի հիման վրա 2011թ. նկարահանված կինոնկարը Նորվեգիայի ամենադիմուլ ֆիլմերից է:

**ISBN 978-9939-810-17-1**

## ԱՌԱՋԱԲԱՆ

Ինքնաշարժների ընդհարումը ֆիզիկայի պարզ երևոյթ է: Ամեն ինչ որոշում է պատահականությունը, բայց բոլոր պատահական երևույթները կարելի են նկարագրել և սուստոնի հավասարումով՝ *ուժ x ժամանակ = զանգված x արագությունների տարրերություն*: Կրժեքները վերագրեք պատահական մեծություններին և կստանաք մի պարզ, իրական ու դաժան պատմություն: Որը, օրինակ, ասում է, թե ինչ կլինի, երբ ժամում ութսուն կիլոմետր արագությամբ սլացող քանինինգունանոց լեփ-լեցուն մի ապրանքատար բախվի նույն արագությամբ ընթացող մեկուկեստոննանոց մարդատար ինքնաշարժի: Կախված այն պատահականություններից, թե որ մասերով ու ինչ անկյան տակ են բախվում ինքնաշարժները, և ինչպիսին է թափքերի կառուցվածքը, հնարավոր են պատմության բազմաթիվ տարրերակներ, բայց բոլորն էլ առնվազն երկու ընդհանուր բան ունեն: Բոլորն էլ ողբերգական ավարտ կունենան: Եվ տուժողը միշտ մարդատարը կլինի:

Այստեղ զարմանալի անդորր է, ես լսում եմ քամու սոսափյունը սաղարթներում և ջրի քչքոցը գետում: Զեօքս ընդարմացած է, գլխիվայր կախված եմ՝ ճգմված մարդկային մարմինների ու երկարի միջև: Վերևուից՝ ինքնաշարժի տակից այրուն ու բենզին է կաթում: Ներքևում, ինքնաշարժի շախմատանկար առաստաղին տեսնում եմ մի մկրատ, կտրված ձեռք, երկու մեռած մարդ և բաց ուղեպայուսակ: Սպիտակ թագուհին տապալված է, ես մարդասպան եմ, և այստեղ ոչ ոք այլս չի շնչում: Ես նոյնպես: Այդ պատճառով էլ շուտով մեռնելու եմ: Կիհակեմ աչքերս ու կիհանձնվեմ: Հանձնվելը հրաշալի է: Այլս չեմ ուզում սպասել: Եվ այդ պատճառով շտապում եմ պատմել այս պատմության իմ տարրերակը՝ պատմությունը մարմինների իրար նկատմամբ կազմած անկյան մասին:

...Իմ ազատ, կախ ընկած ձեռքը ձգվեց դեպի ուղեպայուսակը: Թմրած մատներս ազատեցին բռնակը Սունդեղի մատներից և դա բաց արեցին: Բենզինը հոսում էր մատներիս վրայով ու թափվում

ուղեպայուսակի ներսը, բայց ես շարունակում էի փորփրել, հանեցի մի վերնաշապիկ, մի զույգ կիսագուլպա, վարտիք և պիտույքատուփ: Դա ամբողջն էր: Նույն ազատ ձեռքով բացեցի պիտույքատուփը և պարունակությունը շուր տվեցի առաստաղին: Ատամի մածուկ, էլեկտրասափրիչ, վիրակպչուկ, օճառահեղուկ, թափանցիկ ճկազանգված տոպրակ, որը նա հավանաբար օգտագործել էր օդակայանի ստուգման կետում, վազելին... ահա: Մկրատ՝ սուր, փոքրիկ մի բան մի քիչ ծալված ծայրերով, որը ունանք այս կամ այն պատճառով գերադասում են ժամանակակից եղունգահատից:

Չեզոք շոշափեց երկվորյակներից մեկի փորը, կուրծքը՝ շղթաճարմանդ, կամ կոճակներ փնտրելով: Բայց ես արդեն կորցնում էի մատներիս զգացողությունը, որոնք չեին ցանկանում ոչ ուղեղի հրամաններին ենթարկվել, ոչ էլ դրան տեղեկույթ ուղարկել: Այսպես որ ճանկեցի մկրատը և սուր ծայրը խրեցի հաստ փորը... համարենք, որ դա ենորիդեն էր: Նեյլոն գործվածքը ճղվեց թերևակի ճրբոցով՝ դուրս թողնելով ոստիկանի երկնագույն վերնաշապկի մեջ խցկած փորը: Մի շարժումով կտրեցի վերնաշապիկը, և երևաց մազոտ սպիտակ մաշկով ծածկված ճարպածալքը: Եկել էր ամենավախենալի պահը: Բայց միտքը հնարավոր պարզկի՝ ապրելու, շնչելու հնարավորության մասին, հետ շպրտեց մնացած մտքերը, և ես մկրատը թափով միխճեցի նրա փորը ուղիղ պորտի վերևում: Հանեցի: Ոչինչ չկատարվեց:

Տարօրինակ էր: Փորում անցը կար, բայց այդտեղից ոչինչ դուրս չեկավ, ոչ մի բան, որը, ինչպես հուսով էի, կպակասեցներ ճնշումը ինձ վրա: Փուչիկը նույնքան ուռած մնաց:

Ես նորից խփեցի: Մի նոր անցը: Մի նոր ցամաք ջրիոր:

Ես կատաղաբար զարկում էի մկրատով: Զլոնի, չլոնի: Ոչինչ:

Ինչի՞ց էին բաղկացած այս անհօյալ երկվորյակները: Ի՞նչ է, այնտեղ համատարած ճա՞րպ էր: Եվ այդ ճարպասարը խեղդելո՞ւ է ինձ:

Էլի մի ինքնաշարժ անցավ ճանապարհով:

Ես փորձեցի գոռալ, բայց թոքերիս օդը չհերիքեց:

Վերջին ուժերս հավաքելով՝ միարձեցի մկրատը այդ թափանը, բայց այս անգամ չհանեցի, պարզապես արդեն ուժ չկար: Պահ անց փորձեցի աշխատեցնել մկրատը: Բթամատով ու ցուցանատով բացեցի ու փակեցի: Ներսը ինչ-որ բան կտրեցի: Զարմանալիորեն հեշտ էր: Եվ ինչ-որ բան կատարվեց: Արյան բարակ շիր դուրս ծորաց փորի ներքի մասի ծակից, անհետացավ հագուստի տակ, նորից հայտնվեց անթրաշ վզին, հոսեց կզակով, բերանի վրայով և չքացավ քթանցքում: Շարունակում էի կտրել: Այժմ արդեն մոլեգնաբար: Պարզվեց, որ իրականում մարդը փխրուն էակ էր. պատռվելով բացվում էր, ինչպես հեռուստացույցով իմ տեսած կետը, երբ նրան կտրատում էին: Եվ այդ ամենը՝ մի փոքրիկ մկրատով:

Ես կանգ չառա, մինչև որ փորը կտրվեց գոտկատեղից մինչև կրծոսկը: Բայց արյան ու փորոտիքի զանգվածը, հակառակ իմ ակնկալիքի, դուրս չքափվեց: Չեռքիս ուժը սպառվեց, մկրատը վայր գցեցի, և վերադարձավ նեղացող անցքի ծանոթ զգացողությունը: Անցքի այն կողմում տեսնում էի ինքնաշարժի առաստաղը: Շախմատաձև գորշավուն նկարով: Շուրջս թափված էին շախմատի ջարդված խաղաքարերը: Յանձնվեցի: Փակեցի աչքերս: Յանձնվելը հաճելի էր: Զգացի, թե ինչպես է ծանրության ուժը ինձ ցած քաշում դեպի երկրի կենտրոնը՝ գլխիվայր, ինչպես երեխային՝ մոր արգանդից, ես պետք է վտարվեի, դուրս պրծնեի, մահը մի նոր ծնունդ էր: Ես նույնիսկ կծկվանքներ էի գգում, ինձ մերսող ջղաձգություններ: Տեսա սպիտակ թագուհուն: Լսեցի հատակին թափվող պտղաջրերի ծայնը:

Եվ այդ հոտը:

Տեր Աստված, այդ հո՞տը:

Ես ծնվեցի և կյանքս սկսեցի վայր ընկնելով, գլուխս հարվածելով և լիակատար խավարով:

Լիակատար խավար:

Խավար:

Թթվածի՞ն:

Լույս:

Աչքերս բացեցի: Ես պառկած էի մեջքիս և իմ վերևում տեսնում էի հետևի նստատեղին նստած երկու երկվորյակին, որոնց միջև ես մինչ այդ ճզմված էի: Դետևաբար, ես առաստաղին էի՝ շախմատի տախտակին: Եվ շնչում էի: Մահվան, մարդու փորոտիքի գարշահոտ էր փչում: Նայեցի շուրջու: Թվաց, թե ես սպանդանոցում եմ, երշիկի արտադրանասում: Բայց տարօրինակը այն էր, որ խառնվածքիս բնորոշ ձևով իրեն պահելու փոխարեն՝ զգացմունքները ճնշել, ժխտել ու փախչել, իմ բանականությունը ասես ընդլայնվել էր՝ զգայարաններից ստացված տպավորությունների ամբողջությունը կլանելու համար: Ես որոշեցի մնալ այստեղ: Ներշնչեցի հոտը: Դիտեցի: Լսեցի: Յավաքեցի խաղաքարերը հատակից: Մեկը մյուսի հետևից դրեցի իրենց տեղը խաղատախտակին: Վերջինը կոտրված սպիտակ թագուհին էր: Զննեցի նրան: Եվ դրեցի ուղիղ սև թագավորի դիմաց:

## ՄԱՍ ԶՈՐՌՈՐԴ

### ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ

#### 18. Սպիտակ թագուհի

Ես նստած էի վթարված ինքնաշարժում՝ հայացքս հառած էլեկտրասափրիչին: Տարօրինակ մտքեր են գալիս մեր գլուխը: Սպիտակ թագուհին տապալված էր: Նա, ում օգտագործելով՝ պարտության մատնեցի իմ հորը, իմ անցյալը, այո, իմ ողջ կյանքը: Նա, ով ասում էր, թե ինձ սիրում է, և ում ես խոստացել էի (թեև դա սուտ էր), որ իմ ինչ-որ մասը միշտ կսիրի նրան հենց միայն դա ասելու համար: Նա, ում ես անվանում էի իմ լավագույն կեսը, քանի որ նրան անկեղծորեն համարում էի Յանուսի իմ երկու դեմքից մեկը՝ լավ կողմը: Բայց սխալվել էի: Եվ ատում էի նրան: Ոչ, նույնիսկ դա էլ չկար. Դիանա Ստրոն-Էլիասենը այլևս գոյություն չուներ ինձ համար: Զնայած դրան, ես նստած էի վթարված ինքնաշարժում՝ շրջապատված չորս դիակով, էլեկտրասափրիչը ձեռքիս, և գլխումս միայն մեկ միտք կար:

Արդյո՞ք Դիանան ինձ կսիրի առանց մազերի:

Ինչպես ասել էի, տարօրինակ մտքեր են գալիս մեր գլուխը: Ես վաճեցի այդ միտքը և սեղմեցի միացնել կոճակը: Էլեկտրասափ-րիչը, որը պատկանում էր Սունդեդ մարգարեական ազգանունով մարդուն, սկսեց թրթուալ ին ձեռքում:

Ես պետք է փոխվեի: Ուզում էին փոխվել: Նախկին Ռոջեր Բրաունը այլևս գոյություն չուներ: Եվ ես գործի անցա: Քառորդ ժամ անց ինձ էի նայում հետացույց հայելուց մնացած թեկորում: Տեսքս, ինչպես որ վախենում էի, գեղեցիկ չէր: Գլուխս նման էր չկեղևած գետնանուշի՝ երկարուկ և մեջտեղում փոքր-ինչ փոս ընկած: Սակրված գանգը սպիտակ գունատությամբ առանձնանում էր արևառ երեսիս վերևում: Բայց դա ես էի՝ նոր Ռոջեր Բրաունը: